Համաշխարհային Խաղաղարար Կոնֆերենցիայի յայտարարութիւնը պարզորոշ թելադրում է ամենքին՝ պահպանելու եղած դրութիւնը, մինչև վերջնական որոշման յայտարարութիւնը:

Թիւրք–ադրբէջանեան աւանտիւրայի ամբողջ ընթացքում Զանգեզուրը եղել է միշտ ինքնուրոյն, և դաշնակից հրամանատարութիւնը այդպէս էլ տեսել է Զանգեզուր մտնելիս:

Ամէն մի ոտնձգութիւն մեր ինքնուրոյնութեան դէմ ում կողմից էլ որ երևան գայ, այդ ստատուս կուօ խանգարումն է և մեր կողմից կը հանդիպի ամենաուժեղ դիմադրութեան»:

Այս յանդուգն պատասխանը ստանալուց յետոյ անգլիական ներկայացուցիչը շտապեց հեռանալ: Եւ գործի անցաւ Ադրբէջանը:

Ղարաբաղի խնդիրը փակելուց և Հայաստանը մահմեդական ապըստամբութիւնների վայր դարձնելուց յետոյ, Ադրբէջանի կառավարութիւնը սկսեց ուժեր հաւաքել Զանգեզուրի շուրջը զօրավար Ալի Աղա Շիխլինսկիի գլխաւորութեամբ: Հոկտեմբերին, Շուշիի և Կարեագինի ուղղութեամբ համախմբուեցին 3 հետևակ ու 2 ձիաւոր գնդեր, 8 թեթև ու 4 ծանր թնդանօթներ և 400 քիւրդ կամաւորներ: Նախիջևանի և Շարուրի կողմից շարժման մէջ դրուեցին աւելի քան 3000 կուռղներ: Ադրբէջանը ուզում էր 3 ծայրերից օղակել և արագ ու կտրուկ հարուածներով դրաւել Զանգեզուրը:

Վճռական գործողութիւնների անցնելուց առաջ, դր. Սուլթանովը մի կոչ ուղղեց զանգեզուրցիներին, որով համոզում էր հետևել զարաբաղցիների օրինակին և յօժարակամ ճանաչել Ադրբէջանի իշխանութիւնը: «Ես գիմում եմ, գրում էր նա, Զանգեզուրի ազգաբնակութեան, բանուորներին ու գիւղացիներին... ապացուցէ՛ք, որ դուք կապ չունէք անիշխանական և արկածախնդիր տարրերի հետ: Ես ապահովում եմ ձեր անձի ու գոյքի անձեռնմխելիութիւնը, իսկ ես միշտ յարգում եմ իմ խօսքը: Իսկ եթէ դուք չարունակէք օգնել անիշխանական տարրերին, ես այնքան ոյժ կունենամ, որ ստիպեմ ձեզ ճանաչել Ադրբէջանի հանրապետութեան իշխանութիւնը, բայց այն ժամանակ արիւնահեղութեան պատասխանատուութիւնը կընկնի ձեր վրա»:

Զանգեզուրցիք ականջ չդրին Սուլթանովի յորդորներին, և նոյեմբ. 1–ին ադրբէջանեան զօրքերը Զարուղից, Կարեագինի կողմից, Նախիջևանից ու Դարալագեազից անցան ընդհանուր յարձակման: Ամբողջ 6 օր Զանգեզուրի լեռներում որոտում էին թնդանօթներն ու գնդացիրները: Առաջին օրերը թշնամին գրաւեց Խնածախ, Խոզնավար, Բայանդուր, Կոռնձոր գիւղերն ու Քաչալ Դաղը և սպառնում էր Գորիսին: Նոյ. 4ին զանգեզուրցիները, Ա. Շահմազեանի հրամանատարութեամբ, կանգնեցրին թշնամու յառաջխաղացումը և կատաղի հակագրոհներով ու հարուածներով, նոյ. 6ին, փախուստի մատնեցին ադրբէջանեան բանակը, որը թողեց բազմաթիւ դիակներ, աւելի քան 150 գերի, մէկ թնդանօթ, 20 գնդացիր և հարուստ աւար: Ադրբէջանեան 2րդ ձիաւոր գունդը ամբողջապէս ոչնչացաւ: Զանգեզուրը, շնորհիւ իր զաւակների հերոսական ճիգերի, մի անգամ էլ փրկուեց մահացու վտանգից: